Սերգո ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

ՀԱՐՑԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇԱՐԱԴԱՍԱԿԱՆ ԿԱՂԱՊԱՐՆԵՐԸ ԴԱՍԱԿԱՆ ԳՐԱԲԱՐՈՒՄ

Դասական գրաբարի հարցական նախադասություններում ևս, հրամայականների նման,[1] շարադասական բաղադրիչների հաջորդականությունը մեծ չափով ենթակա է հնչերանգային գործոնի ազդեցությանը, ավելին, հաճախ գերազանցապես պայմանավորված է դրանով: Միևնույն ժամանակ քննարկվող հարցի տեսակետից հարցական նախադասությունները նաև նկատելիորեն տարբերվում են հրամայականներից: Վերջիններիս մեջ ստորոգյալն ունի եղանակային (հրամայական) գրեթե միաձև և դիմային (երկրորդ) բացարձակապես միօրինակ արտահայտություն, մինչդեռ հարցական երանգի նախադասություններում ստորոգյալը կարող է արտահայտվել բայի բոլոր եղանակային և դիմային ձևերով: Պայմանավորված վերոհիշյալ հանգամանքով՝ հրամայական երկկազմ նախադասությունները սովորաբար կառուցվածքայնորեն թերի են:[2] Հրամայական եղանակի բայաձևով արտահայտված գործողության առանձնահատկությունն այն է, որ դրա կատարողը հիմնականում խոսակիցն է, նրան է ուղղված լինում հրամանը: Իսկ խոսակիցն՝ իբրև նախադասության ենթակա, կարող է դրսևորվել միայն անձնական դերանվան երկրորդ դեմքով: Եվ քանի որ հրամայական նախադասություններում բայական ստորոգյալն իր դեմքով ու թվով պարզորոշ ընկալելի է դարձնում ենթական, վերջինս դառնում է միանգամայն ձևական, ուրեմն նաև՝ ավելորդ: Այս է պատճառը, որ նույնիսկ ժամանակակից հայերենի հատեմատությամբ «ենթակայի ավելցուկայնությամբ» բնութագրվող գրաբարում հրամայական երկկազմ նախադասությունների գերակշիռ մասը (գրեթե 85%-ը) արտահայտության պլանում ենթակայազուրկ է: Դրան մեծապես նպաստում է նաև այդպիսի կառույցներում ենթական անվանող կոչականի գրեթե սովորական գործածությունը: Թեև հանդիպում են դերանուն ենթակայի և կոչականի միաժամանակյա գործածության դեպքեր («*Դու, Տե՛ր, պահեա՛ զանձինս մեր յանարժան խայտառականցս*»: «*Եւ դո՛ւ, որդի՛ մարդոյ, մարգարեա՛ց ի վերայ լերանցն Իսրայիլի*»), այնուամենայնիվ ակնհայտ է, որ կոչականի առկայությունը սովորաբար բացառում է առանց այն էլ ձևական ենթակայի անհրաժեշտությունը հրամայական նախադասություններում («*Արքա՛յ քաջ, ունկն դիր սակաւ բանից մերոց*»: «*Կեղծաւո՛ր, հա՛ն նախ զգերանդ յականէ քումմէ*» և այլն):

Մինչդեռ վիճակագրական տվյալների համաձայն՝ երկկազմ հարցական նախադասություններում պատկերն այլ է. այստեղ ենթակայի զեղչման դեպքերը կազմում են ընդամենը 51%, համարյա այնքան, որքան պատմողական նախադասություններում է (47%), գրեթե երեք անգամ պակաս է նրանցում նաև ենթական անվանող կոչականի գործածությունը: Շատ հաճախ սրանցում ենթական կամ նրա միջուկի որևէ բաղադրիչն է հարցական հնչերանգի, ուրեմն նաև նախադասության տրամաբանական շեշտի կրողը, ինչպես՝ «*Ո՞վ* ուրախասցի ընդ յառաջադիմութիւն աշակերտիս», «*Ո՞իսկ* խնդրեաց զայդ ի ձեռաց ձերոց», «*Ա՞յս հատուցումն* եղեւ ինձ», «*Ո՞յր բանից* պարտ էր հաստատուն լինել» և այլն: Մինչդեռ հրամայական կառույցներում հրամանն արտահայտողը և տրամաբանորեն շեշտվածը գերազանցապես ստորոգյալն է կամ լավագույն դեպքում նաև կոչականը, իսկ ենթական եզակի դեպքերում է շեշտի տակ: Ավելին, սրանցում ենթակայի՝ միայն անձնական դերանվամբ արտահայտվելը զրկում է նրան որոշիչ կամ հատկացուցիչ լրացում ունենալու հնարավորությունից, իսկ դրանց կամ ամբողջապես ենթակայի միջուկի բացակայությունը հրամայական նախադասությունների մեծ մասում, անշուշտ, սահմանափակում է շարադասական բաղադրիչների փոխդասավորության տարբերակային բազմազանությունը:

---

[1] *Տե՛ս Ս. Հ ա յ ր ա պ ե տ յ ա ն, Հատուկ հնչերանգով նախադասությունների շարադասական կաղապարները դասական գրաբարում, ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ 5, Գյումրի, 2002, էջ 40:*

[2] *Նույնը:*

Մյուս կողմից էլ, քանի որ հրամայական նախադասությունների մեջ հնչերանգային բարձրակետում ստորոգյալն է, որովհետև նրանով է արտահայտվում հրամանը («*Ապաշաւեա՛* դու ի չարեացդ քոց յայդցանէ», «*Պատմեցէ՛ք* ի հեթանոսս զգործս նորա»), ապա այն իբրև տրամաբանական շեշտի կրող, սովորաբար ձգտում է դեպի նախադասության սկիզբ, որտեղ հրամանի ուժն ամենաբարձրն է, մանավանդ կոչականի բացակայության դեպքում: Սրան հակառակ՝ հարցական նախադասություններում հարցական հնչերանգը կարող է իր վրա կրել նախադասության անդամ կամ ոչ անդամ յուրաքանչյուր շարադասական բաղադրիչ, ինչպես օրինակ՝

Ինքն իսկ *իւրովի չկարէ՞ր* զերկինս և զերկիր...առնել /Եզն.,116/: *Օրէ՞նքն* մեր պատճառք իցեն անվաստակ լինելոյ առաջի քո /Եղ.,92/: *Մ՞ոյս* հատուցումն եղեւ ինձ /Ղուզ.,224/: Կատարեալն *յումմէ՞* կարօտանայր խնդրել զորդի /Եզն.,117/: ...արդ զտարերս *աստուա՞ծս* խոստովանիք /Եղ.,110/: Եւ արդ *ո՞չ արդեօք* առաւել աստուանօր զարմասցիս ի վերայ մերոյ ճշմարտութեանս /ՄԽՊՀ, 85/: *Մի՞թէ* հրէից միայն Աստուած իցէ՝ եւ հեթանոսաց ոչ /Ն. տ.,169/ և այլն:

Ընդ որում, հարցում արտահայտող միավորն առաջադասվելու ընդգծված միտում ունի, իսկ քանի որ այդ դերով կարող է հանդես գալ, ինչպես ասվեց, նախադասություն կազմող բառերից յուրաքանչյուրը, բնականաբար հարցական նախադասություններում շարադասական բաղադրիչների փոխդասավորությունը զգալի չափով կախված է հարցում արտահայտող բառի ինչպես դիրքից, այնպես էլ նախադասության մեջ նրա շարահյուսական գործառությունից: Այսպես, եթե ստորոգյալի լրացումներից մեկն հարցական հնչերանգի կրող է և այդ պատճառով տեղափոխվել է նախադասության սկիզբը, ապա ստորոգյալն իր միջուկի ամբողջականության պահպանման թելադրանքով սովորաբար հարում է նրան, ինչը կարող է առաջ բերել նախադասության գլխավոր անդամների շարադասության սովորական կարգի {SP}շրջում: Հմմտ. «Արծուի վերանայ քով հրամանաւ» և «*Քո՞վ* հրամանաւ վերանայ արծուի» կամ «Որդիքն Իսրայիլի առ Տէր աղաղակեցին» և «*Առ Տէ՞ր* աղաղակեցին որդիքն Իսրայիլի»: Այդպես էլ՝ հարցում արտահայտող առաջադաս ստորոգյալը ենթակայից սովորաբար ընդմիջարկվում է իր միջուկի բաղադրիչներով, ինչպես օրինակ՝ Դուցէ *շոշափիցէ՞* զիս հայր իմ /Ծնունդ., ԻԷ.12/: *Լինիցի՞ ինձ* որդի Որմիզդ /Եզն., 92/ և այլն:

Մեկ այլ իրողության մասին ևս. Ինչպես հրամայական, այնպես էլ հարցական նախադասություններում հնչերանգային բարձրակետը սովորաբար մեկն է, այն լինում է հրաման կամ հարցում արտահայտող բաղադրիչի վրա: Եվ միայն այն դեպքերում, երբ հրամայական կառույցի մեջ հրամայական բայից զատ առկա է նաև ենթական անվանող տրամաբանորեն ընդգծուն կոչականը (երկրորդ դեմքի դերանուն ենթակայի հետ կամ առանց նրա), նախադասության մեջ առաջանում են զույգ հնչերանգային բարձրակետեր («Այլ *դու, որդեա՛կ իմ, զօրացի՛ր* շնորհօք»: «*Փրկեա՛* զիս ի թշնամեաց իմոց, *Աստուա՛ծ*»: «*Երթա՛յք* յինէն, *անիծեա՛լք ի հուրն յաւիտենական*»:): Հարցական նախադասություններում միաժամանակ կարող են հանդես գալ հարցում արտահայտող մեկից ավելի բաղադրիչներ՝ պայմանավորելով երկու և ավելի արտասանական բարձրակետերի միաժամանակյա առկայությունը խնդրո առարկա կառույցներում:

Օրինակներ՝ *Որպիսի՞* համարձակութեամբ և *ո՞յր* հրամանաւ իշխեցէք գործել զայդպիսի մահապարտութեան գործ/ՊՄՊՀ, 78/: *Ո՞յր* աստուած *ո՞յր* աստուծոյ արարածոց խնամակալ լինէր /Եզն., 214/: Իսկ այդպիսի վաճառաց ո՞յր ուրուք զի՞նչ գին բաւիցէ /Ագաթ.,14/: *Զի՞* ելիք յանապատն տեսանել՝ *զեղե՞զն* շարժուն ի հողմոյ /Ղուկ.,Է,24/ և այլն:

Համամիտ լինելով այն մտքին, որ հարցական նախադասությունների շարադասությունն էականորեն տարբերվում է պատմողական նախադասությունների շարադասությունից, քանի որ կառուցվում է ըստ հարցում արտահայտող բառի,[3] տարբերակում և առանձին - առանձին ենք ներկայացնում հարցական բառով և առանց հարցական բառի նախադասությունները՝ նկատի ունենալով, որ դրանք դրսևորում են շարադասական նկատելի յուրահատկություններ:

---

[3] *Վ. Առաքելյան, Գրիգոր Նարեկացու լեզուն և ոճը, Եր., 1975, էջ 91-92*:

1. Գրաբարի ամենագործածուն հարցական բառերն են՝ *զիա՞րդ, ընդէ՞ր, զի՞, արդեօ՞ք, իցէ՞, իցէ՞ արդեօք, ո՞վ, ո՞վ ոք, ո՞, զի՞նչ, որպէ՞ս, ի՞բր, որքա՞ն, ու՞ր, ուստի՞* և այլն: Ի դեպ, շարադասության տեսակետից կարևոր նշանակություն ունի հարցական բառերի խոսքիմասային պատկանելությունը: Դերանուն կամ մակբայ հարցական բառերն իրենց խոսքիմասային իմաստների շնորհիվ նախադասության մեջ կարող են հանդես գալ ամենատարբեր շարահյուսական պաշտոններով (ենթակա, ստորոգելի, որոշիչ, հատկացուցիչ, խնդիր, պարագա և այլն): Հետևաբար, փոքրաքանակ բացառություններով հանդերձ, գրեթե միշտ դրվելով հարցական նախադասությունների սկզբում, դրանք՝ իբրև որոշիչներ, սովորաբար դեպի իրենց են ձգում որոշյալներին (*Զի՞նչ ինչ վնաս* գործեալ է իմ /Եղ.,166/: Տէ՛ր, *զի՞նչ հրաման* տացես ծառայի քում /Յեսու.Ե, 15/), իբրև հատկացուցիչներ՝ իրենց հատկացյալներին (*Ո՞յր դրաստր* ես դու /Ծննդ.,ԻԳ, 47/: *Ո՞յր աստուած ո՞յր աստուծոյ* արարածոց խնամակալ լինէր/Եզն.,214/), իբրև խընդիրներ կամ պարագաներ՝ իրենց լրացյալներին (*Ընդէ՞ր եմոյծ* զնոսա ի կռիւս ընդ միմեանս /Եզն.,62/: Եւ *ուստի՞ տացէ* քաջն Արտաշէս..../ՄԽՊՀ, Բ, ծ/: *Զի՞նչ հաստատուցուք* մեք աստուածոցն փոխանակ այս մեծի յաղթութեանս/Եղ.,36/), իբրև ենթականներ՝ իրենց ստորոգյալներին (*Ո՞վ է Աստուած* յերկինս կամ յերկրի /Բ.Օրէն.,Դ,24 /: *Ո՞ծնաւ* զշիթս անծրևի /Եզն.,172/) և այլն: Իսկ այս հանգամանքը, համոզված կարելի է պնդել, քիչ կարևորություն չի ներկայացնում նման նախադասությունների ամբողջական շարադասական պատկերի ձևավորման առումով:

1.1 Կան հարցական բառեր, որոնք նախադասության անդամ չեն, որովհետև վերաբերականներ են կամ շաղկապներ, այսինքն բուն հարցական բառեր են: Դասական գրաբարում վկայված են բուն հարցական բառով նախադասությունների մի քանի շարադասական մասնակաղապարներ: Նախ նշենք, որ բուն հարցական բառը գերազանցապես դրվում է նախադասության սկզբում: Այն տպավորությունը, թե սովորաբար նրան հաջորդում է ստորոգյալը,[4] կարծում ենք՝ թվացյալ է և ստեղծվել է առավելապես զեղչված ենթակայով երկկազմ և բայական անդեմ միակազմ կառույցների հիման վրա: Մինչդեռ բուն հարցական բառով երկկազմ լրիվ նախադասություններում, որոնք քավականին շատ են գրաբարում, մեր մանրազնին դիտարկումներով՝ ամենահաճախադեպ հանդիպող շարադասական մասնակաղապարի մեջ հարցական բառին անմիջապես հաջորդողը ենթական է, ապա նոր միայն ստորոգյալն իր լրացումներով, եթե այդպիսիք առկա են նախադասության մեջ ({Հարց. բառ→S→P→ ՕկամԱ}):

Օրինակներ՝ *Ո՞չ ապաքէն* ինքն տեսցէ զճանապարհս իմ /Յօր,ԼԱ,4/: *Ո՞չ ապաքէն* արհավիրք նորա զարհուրեցուցանեն զձեզ /ն. տ.,ԺԳ,11/: *Ո՞չ ահաւադիկ* երկիրդ ամենայն առաջի քո է /Ծննդ.,ԺԳ,9/: *Ո՞չ ապաքէն* նա ասաց ցիս /ն.տ.,Ի,5/: *Մի՞թէ* ես յղացայ զամենայն ժողովուրդս զայս /Թուոց,ԺԱ,12/: *Մի՞թէ* դարձեալ որդիք իցեն յորովայնի իմում /Հռութ.,Ա,11/: *Մի՞թէ* օրէնքն մեր դատեն զմարդ /Յոհ.,Է,53/: *Ո՞չ ապաքէն* ոգի առաւել է քան զկերակուր /Մատթ.,Զ,25/: *Մի՞թէ* նա ոք իցէ շահապետ գերեզմանաց /Ագաթ.,42/ և այլն:

Քիչ չեն այն դեպքերը, երբ վերոհիշյալ շարադասական մասնակաղապարում ենթական իրեն հարադրվող *և, նաև, իսկ* և այլ բառերի օգնությամբ տրամաբանորեն ընդգծված վիճակում է, ինչպես՝ Մի՞թէ *և դուք* կամիք աշակերտիլ նմա /Յոհ.,Թ,27/, Մի՞թէ *և մեք* կոյրք իցեմք /ն.տ.,41/, Ո՞չ *ես իսկ* տեսի զքեզ ի պարտիզի անդ ընդ նմա /ն.տ.,ԺԸ,26/: *Ո՞չ ապաքէն և մաքսաւորք* զնոյն գործեն /Մատթ.,Է,46/ և այլն:

1.2 Թեև համեմատաբար սակավ, սակայն հանդիպում է նաև այն շարադասական մասնակաղապարը, ({Հարց. բառ→S→ՕկամԱ→P}), որում ստորոգյալը ընդմիջարկված է ենթակայից իր լրացումներով և եզրափակում է նախադասությունը, ինչի շնորհիվ նկատելի տրամաբանական ընդգծվածություն են ստանում նախադաս խընդիրները կամ պարագաները ի հաշիվ նախադասությունը եզրափակող ստորոգյալի (*Զիա՞րդ* թերակատար զխորհուրդն հայրենի *իմացաւ /Եզն.,108/: Ո՞չ ապաքէն* հինգ ձագք երկուց դանգաց *վաճառին* /Ղուկ.,ԺԲ,6/): Սա առավել նկատելի է մանավանդ ենթակայի զեղչման դեպքում (*Ընդէ՞ր* ի գործելեաց չարեացն վրէժս *պահանջէ* /Եզն.,30/: *Ո՞չ ապաքէն* իբրև զօտարոտիս *համարեալ եմք* /Ծննդ.,ԼԱ,15/ և այլն):

---

[4] *Վ. Առաքելյան, նշվ. աշխ., էջ 92:*

Մեր հին գրականության մեջ նախադասության ամենավերջում ընկած ստորոգյալը՝ իբրև խոսքին վայելչություն հաղորդող շարադասական հնար, ոճական ինքնատիպ միջոց, որին պարտավոր էին տիրապետել քերթության արվեստին քաջատեղյակները, հիմնականում գալիս է թարգմանական գործերից, թեև վկայված է նաև ինքնուրույն երկերում (Եզնիկ, Բուզանդ) և հատկապես Խորենացու մոտ: Ընկնելով նախադասության վերջը՝ ստորոգյալը մի տեսակ դուրս է մնում ուշադրությունից:

Օրինակներ՝ *Զի՞ արդեօք* և մեղադրութիւն մեր այնպիսեացն *ի ճահ պատահիցէ* /ՄԽՊՀ,Ա,գ/: *Մի՞թէ* պատճառ չարեաց զՏէրն *պարտ իցէ իմանալ* /Եզն.,38/: *Ո՞չ ապաքէն* իբրև զօտալուտիս համարեալ ենք նմա /Ծննդ.,ԼԱ,15/: *Ո՞չ ապաքէն* ի վերայ աշտանակի *դնիցի* /Մարկ.,Դ,21/: *Ո՞չ ապաքէն* երկոքին ի խորխորատ *անկանիցին* /Նուկ.,Զ,39/:

1.3 Երբ բուն հարցական բառին հաջորդող ստորոգյալն է, այդպիսի հարցական նախադասությունների համար հիմնականն այն շարադասական մասնակաղապարն է, որում ստորոգյալի շուրջն իր միջուկի բաղադրիչներն են՝ նախադաս կամ հետադաս, և հետո միայն ենթական, որն հաճախ եզրափակում է նախադասությունը՝ մնալով տրամաբանորեն աննկատելի ({Հարց. բառ→ ՕկամA→P→ ՕկամA→ S}):

Օրինակներ՝ *Մի՞թէ* ի Գաղիլեէ գայոց իցէ Քրիստոս /Յոհ.,Է,41/: *Մի՞թէ* առ տէրն քո և առ քեզ *առաքեաց* զիս տէրն իմ /Դ.Թագ.,ԺԸ,27/: *Մի՞թէ* փրկեցին զնոսա աստուածք ազգաց /ն.տ.,ԺԹ,12/: *Ո՞չ ապաքէն* իբրև զփորձութիւն են վարք մարդոյ ի վերայ երկրի /Յօբ,Գ,1/: *Մի՞թէ* տկարանայցէ առ յԱստծոյ *բան* /Ծննդ.,ԺԷ,14/: *Մի՞թէ* ընդ Մովսիսի միայն խօսեցաւ *տէր* /Թիւք,ԺԲ,2/: *Մի՞թէ* յաւիտենից մերժեսցէ զիս *Տէր* /Սաղմ.,ՀԶ,8/: *Ո՞չ ապաքէն* ի սրտմտութեան նորա արգելաւ *արեգակն* /Էկդ.,ԽԶ,5/: *Ո՞չ* ինն լի են *երկինք և երկիր* /Ագաթ.,281/ և այլն:

1.4 Եվ համեմատաբար քիչ են հանդիպում այսպիսի նախադասությունների այն շարադասական տարբերակները, որոնցում ենթական անմիջապես հաջորդում է ստորոգյալին՝ ընկնելով նրա միջուկի մեջ ({Հարց. բառ→P→S→ՕկամA}). ինչպես օրինակ՝ *Մի՞թէ* պահապան իցեմ *ես* եղբօրն իմոյ /Ծննդ.,Դ,9/: *Ո՞չ ապաքէն* իբրև զփորձութիւն են *վարք մարդոյ* ի վերայ երկրի /ն.տ.,Է,1/: *Մի՞թէ* կարիցէ *կոյր* կուրի առաջնորդել /Ղուկ.,Զ,39/: *Մի՞թէ* վերանայցէ *փայտատ* առանց փայտահատի /Եսայի,Ժ,16/: *Մի՞թէ* հանիցէ *ոք* զկղոլոպտած սկայի /ն.տ.,ԽԹ,24/ և այլն:

1.5 Իսկ ենթակայի զեղչման դեպքերում բուն հարցական բառով նախադասություններ գրեթե հավասարաչափ դրսևորվում են «Հարց. բառ→ստորոգյալ→խնդիր կամ պարագա» ({Հարց. բառ→P→ՕկամA}) մասնակաղապարով (ինչպես՝ *Մի՞թէ սպանանել կամիցիս զիս* /Գործք,Է,28/) կամ «Հարց. բառ→խնդիր կամ պարագա→ ստորոգյալ» ({Հարց. բառ→ՕկամA→P) մասնակաղապարով, որում ստորոգյալին նախորդող խնդիրը կամ պարագան տրամաբանորեն ընդգծված են, մանավանդ նախադասությունը եզրափակող նույնատիպ այլ լրացումների առկայության դեպքում:

Օրինակներ՝ *Ո՞չ ապաքէն ի վերայ աշտանակի* դնիցի /Մարկ.,Դ,21/: *Ո՞չ ապաքէն և ընդ մեզ* խօսեցաւ /Թիւք,ԺԲ,2/: *Մի՞թէ զայն եւս* կարիցեն ասել /Եզն.,161/: *Մի՞թէ ի սփիւռս հեթանոսաց* երթայցէ /Յոհ,Է,35/: Եւ արդ *ո՞չ արդեօք առաւել աստանօր* զարմասցիս ի վերայ մերոյ ճշմարտութեանս /ՄԽՊՀ,Բ,իա/ և այլն:

1.6 Եվ վերջապես, բուն հարցական բառով նախադասությունների՝ դասական գրաբարում վկայված մեկ այլ շարադասական մասնակաղապարի մասին. նկատի ունենք այն թերի նախադասությունները, որոնց մեջ ենթակայից բացի զեղչված է նաև ստորոգյալը, իսկ նրա միջուկի խնդիր կամ պարագա լրացումներն առկա են: Այսպիսի կառույցներն ունեն շարադասական բաղադրիչների բացարձակ կայուն և անխախտ հաջորդականություն՝«Հարց. բառ→խնդիր կամ պարագա» ({Հարց. բառ→ՕկամA}): Օրինակ՝ Ո՞չ ապաքեն (դնիցին) վասն կարճելոյ չարեացն /Եզն.,59/:

1.7 Եզակի են նաև այն դեպքերը, երբ բուն հարցական բառը ոչ թե գլխավորում է նախադասությունը, այլ գտնվում է նրա միջնամասում: Կարելի է կարծել, որ պատճառ մեկ այլ շարադասական բաղադրիչ տրամաբանորեն շեշտելու նպատակով նախադասության սկիզբ տանելն է, ինչպես՝ Եւ ինչ նոցա եւ անասունք նոցա եւ չորքոտանիք նոցա *ո՞չ ապաքէն* մեր լինիցի /Ծննդ.,ԼԴ,23/: Իսկ փողն *մի՞թէ* եղջիւր ինչ գոչիցէ /Ագաթ.,406/ և այլն:

1.8 Մեր հաշվումներում բուն հարցական բառով նախադասություններին գրաբարում քանակապես գրեթե տասն անգամ գերազանցում են այն հարցական նախադասությունները, որոնցում հարցում արտահայտող բաղադրիչի դերում հանդես են գալիս հարցական դերանուններ կամ մակբայներ: Վերջիններս, ի տարբերություն բուն հարցական բառերի, ոչ միայն նախադասության անդամ հանդիսացող շարադասական բաղադրիչներ են, այլև, որ քննվող հարցի տեսակետից էական նշանակություն ունի, առաջադասվելու ընդգծված միտումով հանդերձ՝ համեմատաբար ավելի շարժունակ են: Դասական գրաբարում բազմաթիվ են այն նախադասությունները, որտեղ հարցական դերանունները կամ մակբայները հանդես են գալիս կառույցի միջնամասում կամ նույնիսկ վերջում. ինչպես օրինակ՝ Այլ դու, ո՞վ մեծդ ի գիտութեանն Աստուծոյ, *առ ինչ՞* արդեօք հրամայեսցես /Եղ.,8/: Զայլ արարածոցն *ընդէ՞ր* մաղթէ զերկրպագութիւն հեթանոսութեան /Եզն.,88/: Եւ ատամունքն հնդիկին *ուստի՞* ելցեն այնչափ սալիտակ /Ն.տ.,126 /: Եւ զխորհուրդս քո *ո՞վ* գիտեաց /Ի-մաստ.,Թ,15/: Եւ զօրութիւն բանից քոց *ո՞* հանդարտեսցէ /Յօր,Դ,2/: Իսկ սա *ո՞վ իցէ* /Ղուկ.,Թ,9/ և այլն:

Սի կողմից սա, մյուս կողմից էլ՝ նախադասության ամենատարբեր անդամների շարահյուսական դերով այդ բառերի գործածվելը նման կառույցներում բաղադրիչների փոխադասավորության տարբերակային բազմազանության հիմնական պատճառն են:

1.9 Հարցական դերանվամբ արտահայտված ենթական գրաբարում սովորաբար նախադասության սկզբում է: Այսպիսի նախադասությունները գերազանցապես հանդես են գալիս «Ենթակա→ստորոգյալ» ({S→P}) կամ ավելի ծավալուն «Ենթակա →ստորոգյալ→խնդիր կամ պարագա» ({S→P→ՕկամԱ}) շարադասական մասնակցադապարներով:

Օրինակներ՝

Ո՞ նեղեաց պնդեաց դարձուցանել ի մի օրէնս մոգութեան /Եղ.,166/: *Ո՞* ծնաւ զշիթս անձրևի /Եզն.,172/: *Ո՞* եհան զայսպիսի երկրական անուանս՝ զգիշակերս զխոտակերս յերկինս /Ն.տ.,126/: *Ո՞վ* իսկ կարէ պատմել վասն ծանրութեան մտից և սակից լերանց և դաշտաց և մայրեաց /Եղ.,46/: *Ո՞վ* կշտամբեսցէ զքեզ յազգացն կորուսելոց /Ի-մաստ.,ԺԲ,12/: *Ո՞վ* եւ քեզ զիշխանութիւնդ այդ /Մարկ.,ԺԱ,28/: *Ո՞վ որ* ի ձեզ կամիցի շինել աշտարակ /Ղուկ.,ԺԴ,28/: *Ո՞* կարէ բիծ դնել ընտրելոց Աստուծոյ /Կոր.,30/:

Երբեմն այսպիսի շարադասությամբ հարցական նախադասությունները անմիջապես հաջորդում են իրար՝ կազմելով ընդարձակ հարակրկնական շարքեր, խոսքին տալով հուզաարտահայտչական մեծ լիցք, այն դարձնելով ավելի ազդեցիկ: Սա ոճական հնարանք է, որ բնորոշ է մասնավորապես ճարտասանական հարցական նախադասություններին, որտեղ հարցին կամ պատասխան չի ակնկալվում, կամ էլ հարցնողն ինքը նաև պատասխանողն է. ինչպես՝ Ո՞վ այսուհետեւ զմերս յարգեսցէ զուսումն, ո՞վ ուրախասցի ընդ յառաջադիմութիւն աշակերտիս, ո՞վ զհայրական բարբառեսցի զուարճութիւն...., ո՞վ կարկեսցէ զյանդգնութիւն ընդդէմ առողջ վարդապետութեան ...., ո՞վ զնոսա ըմբերանեսցէ ...., ո՞վ մեզ յայսոսիկ ճառակցէ /ՄԽՊՀ,Ողբ/ և այլն:

1.10 Հաճախ ոչ թե ենթական, այլ նրա որոշիչ կամ հատկացուցիչ լրացումն է արտահայտված լինում որևէ հարցական դերանվամբ. *Ո՞ր բանգաւոր* երրեալ տայցէ պատերազմ ընդ այլում թագաւորի /Ղուկ.,ԺԴ,31/: *Զի՞նչ գոյացութիւն* երևի մահու ի միջի /Եղ.,66/: *Ո՞ր մարդ* է յերկրի, եթէ կարող է ընդդէմ դառնալ քում հրամանիդ /Ն.տ.,84/: *Զի՞նչ որոշմունք* իցեն միոյ միոյ ի նոցանէ /Ագաթ.,268/:

Երբեմն էլ այս մասնակադապարներում կա նաև ենթակային նախադասվող կոչական բաղադրիչ, որի առկայությամբ շարադասական բաղադրիչների հաջորդականության վերոհիշյալ կարգը, գրեթե առանց բացառության, անփոփոխ է. ինչպես՝ *Մ՛ր դու՝ ո՞* կացոյց զիս դատաւոր կամ բաժանարար ի վերայ ձեր /Ղուկ.,ԺԲ,14/: *Ծնո՛ղք իմ՝ ո՞* եցոյց ձեզ փախչիլ ի բարկութենէ որ գալոց է /Մատթ.,Գ,7/: *Տէ՛ր՝ ո՞* կայցէ ի խորանի քում /Սաղմ.,ԺԴ,1/: *Տէ՛ր, ո՞* հաւատաց լրոյ մերում /Եսայի,ԾԳ,1/:

1.11 Համեմատաբար սակավաթիվ են այն նախադասությունները, որտեղ հարցական դերանուն ենթակային անմիջապես հաջորդում է որևէ խնդիր կամ պարագա՝ ընդմիջարկելով գլխավոր անդամների կից շարադասությունը ({S→ՕկամԱ→P } շարադասական մասնակադապար), ինչպես՝ Ո՞վ *առաւել* սիրեսցէ զնա /Ղուկ.,Է,42/: Ո՞վ որ *առաջի նորա այնպէս* ընդդիմացաւ /Էկղ.,ԽՁ,48/:

1.12 Եթե այսպիսի դիրքը ստորոգյալի լրացմանը որոշակի շեշտվածություն է հաղորդում, ապա ({ՕկամA→S→P}) շարադասական մասնակաղապարում, որտեղ լրացումը նախադասության սկզբում է՝ նույնիսկ հարցական դերանուն ենթակայից առաջ, այն իսկապես տրամաբանական շեշտի կրողն է. *Եւ զօրութիւն բանից քոյ* ո՞ հանդարտեսցէ /Յօր,Դ,2/: Իսկ արդ եթէ յանիրաւ մամօնային չեղէք հաւատարիմք, *զճշմարիտն ձեզ* ո՞ հաւատասցէ: Եւ եթէ յօտարին չեղէք հաւատարիմք, *զձերն* ո՞ տայցէ ձեզ /Ղուկ.,ԺԶ,11-12/:

Ի դեպ, «Խնդիր→հարց. դերանուն ենթակա→ստորոգյալ» մասնակաղապարը դասական հայերենում երբեմն կարող է գործածվել ոճաարտահայտչական նկատելի գունավորմամբ, երբ բարդ կառույցի մեջ հանդես է գալիս խոսքը միօրինակությունից ազատող դերով՝ բարդության առաջին եզրում առկա «Հարց. դերանուն ենթակա→ստորոգյալ→խնդիր» շարադասական մասնակաղապարի հետ ձևավորելով շարադասական պեսպիտություն, ինչի շնորհիվ բարդության սկիզբն ու վերջը հավասարակշռվում են հարցական հնչերանգի ուժով. ինչպես՝ Ո՞ ծնաւ զշիթս անձրևի, *զեղեամն յերկինս ո՞ ծնաւ* /Եզն.,172/:

1.13 Դասական հայերենի երկկազմ հարցական նախադասությունները սովորաբար արտահայտվում են «Բաղադրյալ ստորոգյալ→ենթակա» ({P→S}) շարադասական մասնակաղապարով, եթե հարցական դերանունը կամ մակբայը հանդես է գալիս ստորոգելիի դերում:

Օրինակներ՝ *Առ ի՞նչ է* քո մեծ տրտմութիւնդ /Եղ.,84/: *Ո՞այն որ իցէ* հատուցանող վաստակոցն քոց /Ագաթ.,61/: *Զի՞նչ են* այս եօթն որոջք ոչխարացդ /Ծննդ.,ԻԱ,29/: *Առ իմէ՞ իցեն* այն անդրանկութիւնք /ն.տ.,ԻԵ,32/: *Ո՞ր են* հաւատք ձեր /Ղուկ.,Ը,25/: Ո՞վ են լերինքն այնոքիկ /Բուզ.,175/: *Ու՞մ է* վայ, *ու՞մ են* խռովութիւնք, *ո՞ւմ* դատաստանք, *ո՞ւմ* դժնդակութիւնք, *ո՞ւմ* վէրք տարապարտուց, և *ո՞յր են* կապուտակ անկողինք /Առակ.,ԺԳ,29/: Եւ *ո՞ր իցեն* արդեօք անպակաս ուրախութիւնքն /Ագաթ.,62/:

Ի դեպ, այս մասնակաղապարում հաճախ առկա է նաև կոչական, որը որպես կանոն, կա՛մ նախադասության սկզբում է (*Եղբա՛ր*, ուստի՞ էք դուք /Ծննդ.,ԻԹ,4/), կա՛մ վերջում (Ո՞ւր է յաղթութիւն քո, *մա՛ռ*, կամ ո՞ւր են խայթոցք քո, *դժոխք* /Ագաթ.,594/: Ո՞վ ես դու, *որդեա՛կ* /ն.տ.,ԻԷ,19/), բայց ոչ գլխավոր անդամների միջև:Նույնը չի կարելի ասել, երբ ենթական զեղչված է. այս դեպքում կոչականը գերազանցապես եզրափակում է նախադասությունը. ինչպես՝ Ո՞ւր ես, Ադա՛մ /Եզն.,60/: Զի՞ է, որդեա՛կ /Ծննդ.,ԻԲ,7/ և այլն:

Հակառակը, երբ գլխավոր անդամների հաջորդականության վերոհիշյալ կարգը շրջված է ({S→P}), դիտվում է սակավադեպ. ինչպես՝ Իսկ սա *ո՞վ իցէ* /Ղուկ.,Թ,9/: Զարիքս .... *ուստի՞ իցեն* /Եզն.,27/: Ընդ որում, այս երկու մասնակաղապարները երբեմն միևնույն պարբերության մեջ ուղղակի հերթագայում են իրար՝ պատումն ազատելով շարադրանքի միապաղաղությունից (տե՛ս Յոհ.,Ա,20-22 և այլն): Հանդիպում են նաև դեպքեր, երբ ենթական ընկած է բաղադրյալ ստորոգյալի երկու բաղադրիչների արանքում. Զի՞նչ այն *բանք* իցեն /Բուզ.,173/: Ո՞ւր *աներկիւղութիւն* քաջ հովուի է /ՂՓՊՀ,199/: Իցէ՞ *ոք* ի ժամանակս նմանող մարգարէին Երեմիայի /ն.տ.,200/:

1.14 Բազմաթիվ են այն դեպքերը, երբ հարցական դերանունները կամ մակբայները նախադասության մեջ հանդես են գալիս ստորոգյալի միջուկի խնդիր կամ պարագա լրացումների շարահյուսական գործառույթով: Թվում է՝ նման խոսքիմասային արտահայտությունը, ինչպես նախորդ դեպքերում, այստեղ էլ նախադասության մեջ պիտի ապահովեր բայական անդամի լրացման գերազանցապես սկզբնային դիրք: Թերևս իրոք այդպես է բայական միակազմ և զեղչված ենթակայով երկկազմ նախադասություններում, որտեղ «Խնդիր/պարագա→ստորոգյալ» ({ՕկամA→P}) շարադասական մասնակաղապարը գրեթե բացարձակ դրսևորում ունի. ինչպես՝ *Զի՞ գործես: Յո՞ երթաս:* Շատ ավելի հաճախադեպ են այս կաղապարի ծավալուն տարբերակները՝ ստորոգյալի նախադաս և հետադաս այլ լրացումներով:

Օրինակներ՝ *Զիա՞րդ* զնա նենգութեամբ կալեալ *սպանանիցեն* /Մարկ.,ԺԴ,1/: Զի՞ տեսանես զշիւղ յական նոյբօր քո /Ղուկ.,Զ,41/: Ե՞ղբ ի քնոյ զարթիցես /Առակ,Զ,9/: *Ե՞ղբ ուսանիցիք* զբազմութիւն անուանս աստուածոցն նոցա /Եղ.,112/: *Զի՞նչ ասացից* ցնոսա /Ելից,Դ,1/: *Ընդէ՞ր հարկանես* զընկերդ /ն.տ.,13/: *Ընդէ՞ր եմոյծ* զնոսա ի կռիւս

ընդ միմեանս /Եզն.,62/: *Ընդէ՞ր* և յանձանց իսկ *ոչ ընտրէք* զարժանն /Ղուկ.,ԺԲ,51/: *Ո՞ւմ նմանեցուցցուք* զարքայութիւն Աստուծոյ, կամ *որո՞վ առակաւ առակեսցուք* զնա /Մարկ.,Դ,30/: Եւ արդ *զո՞ր հիւղ* առ ձեռն *դնիցեն* Աստուծոյ /Եզն.,22/: *Զիա՞րդ իշխեսս* պաշտել զԱստուածն այն /Ագաթ.,38/:

1.15 Ի դեպ, նկատելի է, որ այսպիսի երկկազմ հարցական նախադասություններում ենթակայի զեղչման դեպքում համարյա կրկնակի չափով մեծանում է ենթական անվանող կոչականի գործածության հաճախականությունը: Ընդ որում, վերջինս, մեր հաշվումներով, գրեթե հավասարաչափ հանդես է գալիս ինչպես նախադասության սկզբում՝ հարցական հնչերանգը կրող բայական լրացումից առաջ (*Տէր, յո՞վ* երթաս /Յով.,ԺԳ,36/: *Ո՞վ ազգ անհաւատ և թիւր, մինչև ցե՞րբ* անսայցեմ ձեզ /Մատթ.,ԺԷ,16/: *Արք իսրաէլացիք՝ զի՞* զարմացեալ էք ի վերայ այսորիկ /Գործք,Բ,12/: *Այր դու, զի՞* կաս զարմացեալ /Ագաթ.,741/), այնպես էլ նրանից անմիջապես հետո (*Մինչև ցե՞րբ, Տէր,* մոռանաս զիս իսպառ /Սաղմ.,ԺԲ,2/: *Ընդէ՞ր, արքայ,* ցայդ վայր միայն ետուր ընթեռնուլ /Եղ.,26/:), իսկ համեմատաբար սակավ դեպքերում՝ նաև ստորոգյալից հետո (*Ընդէ՞ր* հատուցանիցես ինձ, *արքայ,* զհատուցումնդ զայդ /Բ.Թագ.,ԺԹ,36/) կամ նույնիսկ նախադասության վերջում, ինչպես՝ *Մինչև յե՞րբ* անկեալ կաս, *ո՛վ վատ* /Առակ,Զ,9/: *Ընդէ՞ր* եղեր ինձ թշնամի, *Արշակ արքայ Հայոց* /Բուզ.,217/:

1.16 Ակնհայտորեն եզակի են այն դեպքերը, երբ զեղչված ենթակայով երկկազմ հարցական նախադասություններում հարցական դերանուններով կամ մակբայներով արտահայտված բայական լրացումը թողնում է իր սկզբնային դիրքը՝ հայտնվելով նախադասության միջնամասում: Դա տեղի է ունենում տրամաբանական շեշտն իր վրա կրող բայական մեկ այլ լրացման՝ նախադասության սկիզբ տեղաշարժվելու պատճառով, օրինակ՝ *Յայլս արարածոցն ընդէ՞ր* մաղթէ զերկրպագութիւն հեթանոսութեան /Եզն.,88/: Վասն այլոցն զի՞ հոգայք /Ղուկ.,ԺԲ,26/: *Իսկ կամամանակս զայս զիա՞րդ ոչ* փորձէք /Ն.տ.,56/: *Մեօքակերպ զԱստուած ի՞* քարոզեսցուք յօղապատ անդամովքս զանգեալ ի հողոյ /Ագաթ.,367/:

1.17 Եթե զեղչված ենթակայով երկկազմ հարցական նախադասություններում «Հարց. դերանվամբ խնդիր/պարագա→ստորոգյալ» ({ՕկամԱ→Բ}) հաջորդականությունը գրեթե բացարձակ դրսևորում ունի, ապա երկկազմ լրիվ նախադասությունների մի զգալի մասում (մոտ 35%) այդպիսի բայական լրացումը միջադաս է՝ դրված հիմնականում սկզբնային ենթակայի և ստորոգյալի արանքում: Նմանատիպ նախադասությունները ունեն «Ենթակա→հարց. դերանվամբ խնդիր կամ պարագա→ստորոգյալ» ({Ս→ՕկամԱ→Բ }) շարադասական մասնակադապարը:

Օրինակներ՝ Դու *ուստի՞* գաս /Յոբ,Բ,2/: Եւ բազուկ Տէառն *ո՞ւմ* հայտնեցաւ /Եսայի,ԾԳ,1/: Որդիքն ձեր *ի՞* հանիցեն /Ղուկ.,ԺԱ,19/: Այլ դու, ո՛վ մեծդ ի գիտութեան Աստուծոյ, *առ ի՞նչ արդեօք* հրամայեսցես/Եղ.,8/: Ինքն *յո՞* մարքէր ամփոփել /Եզն.,20/: Հազար ամն *ուստի՞* երևէր /Ն.տ.,96/ և այլն:

Ավելի հաճախ այս մասնակադապարը կարող է ընդարձակվել ստորոգյալի այլ լրացումներով ևս, որոնք սովորաբար եզրափակում են կառույցը, ինչպես՝ Դուք ընդէ՞ր անցանէք *զպատուիրանաւն Աստուծոյ՝ վասն ձերոյ աւանդութեան* /Մատթ.,ԺԵ,3/: Եւ արդ դուք զի՞ լռեալ կայիք *ի դարձուցանելոյ զարքայ* /Բ.Թագ.,ԺԹ,10/: Դուք լուսազգեստք ընդէ՞ր յուդարկեցայք *ընդ նոսա ի նոյն խաւար* /Եղ.,110/: Փառքն յումեքէ՞ յաջողեալ էին *նմա* /Եզն.,96/:

Սակավ դեպքերում դրանք կարող են ընդգծման նպատակով առաջադասվել ստորոգյալին (Դուք զիա՞րդ *զկնի կուրացն* կուրացարուք /Եղ.,110/: Զրուանն *զկարիճն Արիմն* զիա՞րդ ծնանէր /Եզն.,98/: Նա զիա՞րդ *յառաջ քան զծնանելն* դներ նմա անուն Որմիզդ /Ն.տ.,/: Ես *աւերակացս* ո՞ւմ թագաւորեմ /ՄԽՊՀ,Բ,կա/) կամ, նույնիսկ առաջ անցնելով ենթակայից, դրվել նախադասության սկզբում (*Յերեսաց քոց* ես յո՞ փախեայց /Յոհ.,ԺԳ,36/):

1.18 Այնուհանդերձ դասական հայերենի երկկազմ լրիվ հարցական նախադասությունների գերակշիռ մասում հարցական դերանվամբ կամ մակբայով արտահայտված բայական լրացումը սկզբնային դիրք ունի: Այսպիսի նախադասությունները գլխավոր անդամների փոխադասավորության տեսակետից բաժանվում են գրեթե հավասարաքանակ երկու խմբերի:

Առաջինն այն շարադասական մասնակաղապարն է, որում վերոհիշյալ բայական լրացմանը հաջորդում է ստորոգյալը, իսկ վերջինիս՝ ենթական: Ընդ որում, ենթական կարող է եզրափակել նախադասությունը. Կամ թէ *քո՞վ հրամանաւ* վերանայ *արծուի* /Յօր,Լ,Թ,27/: *Ընդէ՞ր* բնաւ գտանին *ստացուածք անմտին* /Առակ,ԺԷ,16/: *Ընդէ՞ր* ընդ մաքսաւորս և ընդ մեղաւորս ուտէ *վարդապետն ձեր* /Մատթ.,Թ,11/: *Ո՞ր* դիտեաց *եղբօրորդին քո* /Երգ,Ե,17/: *Ի՞նչ* իցէ *զօրութիւն նորա* /Դատ.,ԺԶ,5/: *Վասն է՞ր* կարմիր են *ձորձք քո* /Եսայի,ԿԳ,2/: *Այնպիսի՞ արդեօք* արար զնա *Աստուած* /Եզն.,42/: *Յո՞* երթայցէ *դա* /Յոհ.,Է,35/: *Ուստի՞* ծնանիցին *օղք ամպածինք* /Ագաթ.,269/: *Զի՞նչ* խնդրէ ի քէն *Տէր, ո՛վ մարդ* /Ն.տ.,696/: *Զի՞նչ* գործեսցուք *արք եղբարք* /Գործք,Ը,37/:

Այս շարադասական կաղապարի ավելի ծավալուն տարբերակում ենթական նաև կարող է հայտնվել ստորոգյալի միջուկի ներսում՝ տրոհելով այդ միջուկի բաղադրիչների անմիջական կապը. ինչպես օրինակ՝ Որո՞վ իշխանութեամբ գործես *դու* զայդ /Ղուկ.,Ի,2/: Որպէ՞ս մատնեցին զնա *քահանայապետքն և իշխանքն մեր* ի դատաստան մահու /Ն.տ.,ԻԴ,20/: Եւ ուստի՞ տացէ *քաջն Արտաշէս* հազարս ի հազարաց և բիւրս ի բիւրուց ընդ քաջազգւոյ կոյս օրիորդիս Այանաց /ՄԽՊՀ,Բ,ծ/: Զի՞նչ հատուցցուք *մեք* աստուածոցն փոխանակ այս մեծի յաղթութեանս /Եղ.,36/: Ո՞ր գնաց *եղբօրորդին քո գեղեցիկդ* ի կանայս /Երգ,Ե,17/: Որո՞վ զօրութեամբ կամ որո՞վ անուամբ արարիք *դուք* զայս /Գործք,Դ,7/: Յո՞յր որովայնէ ելանիցեն *զետք* աղբերօքն հանդերձ /Ագաթ.,269/ և այլն:

Քիչ չեն այն դեպքերը, երբ խոսքի ոճավորման նպատակով, ինչպես վերևում ասվեց, հաջորդող նախադասությունը շարադասորեն ներկայացնում է նախորդի շրջված տարբերակը. ինչպես օրինակ՝ Յո՞ երթայց ես յոգւոյ քումմէ, *կամ յերեսաց քոց ես յո՞ փախեայց* /Ագաթ.,281/:

Երկրորդն այն շարադասական մասնակաղապարն է, որում հարցական դերանվամբ կամ մակբայով արտահայտված բայական լրացմանը հաջորդում է ենթական, իսկ վերջինիս՝ ստորոգյալը՝ մենակ կամ իր խմբով. ինչպես օրինակ՝ Զի՞ Հերոդէս երկնչիւր ի Յոհաննէ /Մարկ.,Զ,20/: Ընդէ՞ր սա զմեղաւորս ընդունի /Ղուկ.,ԺԵ,2/: Ընդէ՞ր դուք ընդ նոսա սոյրեցեալ տոչորեցայք /Եղ.,110/: Ուստի՞ օձն իմացաւ գհանգամանս չարին /Եզն.,38/: Զիա՞րդ բարւոյն արարած չարին արարածոց դայեակ մտեալ՝ սնուցիչ լինիցի /Ն.տ.,52/: Կամ որպէ՞ս մարդ հողաբեր՝ օրինակաւ Արարչին յաշխարհ գայցէ /Ագաթ.,271/ և այլն:

Սակայն դեպքերում հարցական հնչերանգը կրող բայական լրացմանն և նրան հաջորդող ենթակայի միջև կարող է ընկած լինել մի այլ խնդիր կամ պարագա լրացում. Եւ ընդէ՞ր *ըստ նոցա բանիցն* չարիքն ոչ լինէին աստուածք /Եզն.,26/: Ընդէ՞ր *ի հնդիկս* ոչ ոք երբեք սպիտակ ծնաւ /Ն.տ.,52/ և այլն:

2. Մոտավոր հաշվումներով՝ դասական հայերենում տասը հարցական նախադասություններից միայն երկուսն են առանց հատուկ հարցական բառի: Ընդ որում, ինչպես տեսանք, շարադասության առումով հարցական բառերով նախադասությունները ներկայացնում էին միանգամայն տարբեր պատկերներ: Նախադասության անդամ չհանդիսացող հարցական բառը՝ իբրև հարցական հնչերանգի կրող, գերազանցապես զբաղեցնում էր նախադասության սկիզբը և համարյա որևէ նշանակություն չուներ կառույցում շարադասական բաղադրիչների հաջորդականության կարգի ձևավորման տեսակետից: Մինչդեռ դերանուններով կամ մակբայներով արտահայտված հարցական բառերը, որ առաջադասվելու նույն բացարձակ միտումը չունեն և համեմատաբար շարժունակ են, իբրև նախադասության անդամ շարադասական բաղադրիչներ, իրենց գրաված դիրքով էապես պայմանավորում էին կառույցի համապատասխան շարադասությունը: Այս տեսակետից ակնհայտ ընդհանրություն կա սրանց և ընդհանուր առմամբ փոքրաթիվ այն հարցական նախադասությունների միջև, որոնցում համապատասխան հնչերանգը դրսևորվում է ոչ թե այդ նպատակին ծառայող հատուկ բառերով, այլ գոյականներով, ածականներով, թվականներով, բայերով և ոչ հարցական մակբայներով ու դերանուններով: Վերջիններս, նախադասության տարբեր անդամների դերում դառնալով հարցական հնչերանգի կրողներ, ամենևին էլ հակված չեն զբաղեցնելու միայն նախադասության սկիզբը, և, ինչպես վկայում են բազմաթիվ բնագրային օրինակները, ունեն կառույցի մեջ ազատ տեղաշարժման բավականին մեծ հնարավորու-

թյուններ: Ավելին, եթե հարցական դերանուններն ընդհանրապես չեն դրվում նախադասությունը եզրափակող դիրքում, ապա նույնը չի կարելի ասել հարցումն արտահայտող գոյականների, բայերի կամ նյութական իմաստի տեր այլ բառերի մասին. ինչպես օրինակ՝ Գուցէ եկեալ յանկարծակի՝ գտանիցէ զձեզ *ի քո՞ն* /Մարկ.,ԺԳ,36/: Տէր. գսգգ մի զանգետ և զարդար *կորուսանիցե՞ս* /Ծնն.,Ի,4/ և այլն:

2.1 Առանց հատուկ հարցական բառի նախադասություններում յուրաքանչյուր անդամ կարող է կրել հարցական հնչերանգը, այնուհանդերձ այն, ուրեմն նաև տրամաբանական շեշտը, մեծամասամբ ստորոգյալի վրա է: Թեև քիչ, բայց հանդիպում են այդպիսի ստորոգյալի՝ նախադասություն եզրափակող գործառություններ՝ տրամաբանորեն չեզոք առաջադաս ենթակայով ({S→P}շարադասական մասնակաղապար. *Եւ դու փրկիցի՞ս* /Դ.Թագ.,ԺԹ,12/, *Մերմն յառաջագոյն ցանիցի՞* /Եսայի,ԻԸ,24/) կամ ավելի ծավալուն՝ ({S→ՕկամA→P}) մասնակաղապարով, որում տրամաբանորեն շեշտակիր ստորոգյալն ունի նաև խնդիր կամ պարագա լրացում. ինչպես օրինակ՝ *Բայց ինքն եթէ իցէ և եթէ չիցէ՝ զայն ո՞չ գիտէ* /Եզն.,12/, *Չարիքն....անձի՞նք ինչ՝ իցեն* /ն.տ.,24/, *Եւ զթագաւորդ ձեր ի խա՞չ հանիցեմ* /Յոհ.,ԹԺ,15/:

2.2 Ավելի հաճախ այդպիսի ստորոգյալը նախադասության միջնամասում է: Այս դեպքում տրամաբանորեն աննշանակ են նախադասության ոչ միայն սկիզբը, այլև վերջը, որտեղ կարող են հայտնվել ինչպես ենթական, այնպես էլ ստորոգյալի որևէ լրացում ({S→P→ՕկամA} և {ՕկամA→P→S}մասնակաղապարներ): Օրինակներ՝ Դու զերիս աւուրս *կանգնե՞ս* սա /Յոհ.,Բ,20/: Դու *հաւատա՞ս* յՈրդի Աստուծոյ /ն.տ.,Ը,35/: Վարդապետն ձեր *ո՞չ տայ* զերկդրամեանն /Մատթ.,ԺԴ,7/: Իսկ որդի մարդոյ եկեալ *գտանիցէ՞* արդեօք հաւատս յերկրի /Ղուկ.,ԺԸ,8/: Դու արդեօք *ո՞չ յիշեսցես* զչարիսն /Ագաթ.,245/: Ոք *տացէ՞* քեզ ձայն /Յօր.,Է,1/: Արդ զգիրս *գիտէ՞* սա /Յոհ.,Է,15/:

Սրան հակառակ՝ նախադասության սկիզբը ուժգին է հնչվում, եթե հարցումն իր վրա առնող միջադաս ստորոգյալին նախորդում է կոչական. ինչպես՝ Ո՛վ լի ամենայն նենգութեամբ և խորամանկութեամբ, որդի՝ սատանայի, թշնամի՝ ամենայն արդարութեան՝ *ո՞չ լռես* ի թիւրելոյ զճանապարհս Տեառն զուղիղս /Գործք,ԺԳ,10/: Կենդանորք՝ իրաքանչիւր ոք ի ձէնջ ի շաբաթու *ո՞չ արձակէ* զեզն իւր կամ զէշ ի մսրոյ /ն.տ.,ԺԳ, 15/:

2.3 Սակայն հարցական հնչերանգը կրող ստորոգյալի համար նախընտրելին, անշուշտ, նախադասության սկիզբն է (*Մ՞ոյ է ուրախութիւնն* /Ագաթ.,105/, *Գիտէ՞ր Աստուած* /Եզն.,44/): Կառույցի ընդարձակման դեպքում ենթական կարող է ոչ միայն եզրափակել նախադասությունը, այլև հայտնվել ստորոգյալի միջուկի ներսում, նաև ստորոգյալի բաղադրիչների միջև ({P→ՕկամA→S} և{P→S→ՕկամA}շարադասական մասնակաղապարներ). ինչպես՝ Հաւա՞նք ինչ ընդ միմեանս էին *բնութիւնքն* /Եզն.,28/: Մարմնաւո՞ր էին արդեօք *դիքն* /ն.տ.,82/: Գտանիցի՞ն *իշացուլք* ի Բաբիլոնն /ն.տ.,80/: Եւ չիցէ՞ արդեօք հատեալ *յոյս կենաց մերոց* ի նմանէն /Ագաթ.,245/: Կամ թէ կեցցէ՞ արդեօք *մարդ* լոկ միօրեայ ժամանակի յանհնարին ի խոր վիրապի անդ /ն.տ.,239/: Ծրարիցէ՞ *ոք* զհուր ի գոգ /Սաղմ.,ՀԸ,6/: Ո՞չ երկիցես *դու* յերկիւղէ գիշերոյ /ն.տ.,6/: Մի՞ կոչեաց *Տէր* զերիս թագաւորս տալ զնոսա ի ձեռս Մովսէսի /Դ.Թագ.,Գ,14/: Չիցե՞ն *քորք* դորա աստ առ մեզ /Մարկ.,Զ,3/: Իցե՞ն ի դիւաց *կէսք* մարմնաւորք /Եզն.,82/: Ո՞չ *դու* երախայ էիր /Բուզ.,276/: Ո՞չ *դու* ամրացուցէր զարտաքին նորա և զներքին տան նորա /Յօր.,Ա,10/: Ո՞չ *ձեռն* իմ արար զայս ամենայն /Գործք,Է,50/: Ո՞չ *այդ Մուշեղն* է /Բուզ.,243/ և այլն:

Ինչպես վերևում արդեն ասվել է, հաճախ, հատկապես քարդ կառույցի եզրերի միջև հարցման հնչերանգի ուժը հավասարակշռելու նպատակով այդ հնչերանգը կրող ստորոգյալները գրավում են տրամագծորեն հակառակ դիրքեր՝ զբաղեցնելով առաջին նախադասության սկիզբը և երկրորդի վերջը. ինչպես՝ *Ծրարիցէ՞* ոք զհուր ի գոգ և զհանդերձն ո՞չ այրիցէ: Կամ *զնայցէ՞* ոք ի վերայ կայծակնանց հրոյ և զոտս իւր *ո՞չ խարշիցէ* /Սաղմ.,ՀԸ,6/:

2.4 Ենթակայի զեղչման դեպքում հարցում արտահայտող ստորոգյալը հիմնականում նախադասության սկզբում է՝ իր լրացումներից առաջ. ինչպես օրինակ՝ Արդ *ուսուցանիցէ՞ք* զպատիր խաբէութիւն մոգաց /Եղ.,110/: *Նայեցա՞ր* մտօք քովք ընդ ծառայ իմ ընդ Յօր /Յօր.,Ա,8/: *Անկանիցի՞մ* ի ձեռս անթլպատից /Դատ.,ԺԵ,18/: *Յաւել-*

զո՞ք միասնագամ ելանել ի պատերազմի ընդ որդիսն Բենիամինի եղբօր մերում /ն.տ.,28/: *Կա՞յ* յուխտի քո, *պահէ՞* զդաշինս քո /Բուզ.,170/: *Տայցե՞ս* մեզ զուղիղ վարդապետութիւն, և *ո՞չ կալեալ* ընդ մեզ ոխս, և *ո՞չ արկանիցես* զմեզ յարդարև յուղիղ ճանապարհէն /Ագաթ.,245/: *Տեսանե՞ս* զաւետիս հրեշտակացն յօթևանս հովուացն /ն.տ., 393/: Հակառակը, երբ հարցական հնչերանգը կրող ստորոգյալը նախադասության վերջում է՝ իր լրացումներից հետո ({ՕկամA→P}), քիչ է հանդիպում. Ինչպես՝ Պատուիրանս *զիտե՞ս* /Մարկ.,Ժ,19/:

2.4 Բնագրերում հաճախ կարելի է հանդիպել բարդ կառույցների, որոնց առաջին եզրն ունի {P→ՕկամA} շարադասական մասնակաղապարը՝ հարցում արտահայտող առաջադաս ստորոգյալի ուժեղ ընդգծմամբ, իսկ երկրորդ եզրը սկսվում է համեմատաբար թույլ հարցական հնչերանգ կրող *եթէ* կամ *թէ* շաղկապներով. *Լինե՞լ* կցորդ կենաց իմոց, *եթէ* մեռանել տարապարտուց /Ագաթ.,100/: *Առնե՞ս* զկամս իմ, *թէ* ոչ պաշտես զդիսն /ն.տ.,109/: Ինչպես նկատվել է, երկրորդում ևս սովորաբար առկա է լինում նույն մասնակաղապարը, միայն թե՝ հարցական հնչերանգը ստորոգյալից փոխադրվում է շաղկապի վրա: Եթե առաջին եզրում վերոնշյալ հաջորդականությունը շրջվում է՝ {ՕկամA→P}, ապա նույնը սովորաբար կատարվում է նաև երկրորդում. ինչպես՝ Ղակի՞ շ գործիցեն արդեօք, եթէ արձակ բանակեսցին. Ճակատ առ ճակա՞տ գործիցեն, եթէ համագունդ ընդ մի տեղի դրդիցեն /Եղ.,176/ և այլն:

2.5 Երբ հարցումն արտահայտվում է ստորոգյալի լրացմամբ, ապա նա սովորաբար նախադասության սկզբում է՝ իր լրացյալից առաջ (*Տէ՛ր՝ առ մե՞զ ասացեր զառակդ այդ* /Ղուկ.,ԺԲ,41/, *Իսկ ի բռնաւորա՞ց արդեօք ի հարկէ մեռանիցի* /Ագաթ.,460/), եզակի դեպքերում նաև՝ նախադասության վերջում (*Գուցէ եկեալ յանկարծակի՝ զտանիցէ զձեզ ի քո՞ւն* /Մարկ.,ԺԳ,36/):

2.6 Եթե հարցման ուժը կենտրոնացած է ենթակայի վրա, ապա հարցական նախադասություններն հիմնականում ունեն «Ենթակա→ստորոգյալ» և «Ենթակա→ստորոգյալ→խնդիր կամ պարագա» ({S→P} և {S→P→ՕկամA}) շարադասական մասնակաղապարները: Օրինակներ՝ *Մ՞ոյ հատուցումն* եղեւ ինձ /Բուզ.,224/: *Օրէ՞նք մեր* պատճառք իցեն անվաստակ լինելոյ առաջի քո /Եղ.,92/: Արդ *դո՞ք* պարարիցէք զմարմինս ձեր նմա ի կերակուր /ն.տ.,110/: *Դէ՞ռ* ուրեմն հարաւ ի քեզ /Բուզ.,214/: *Ե՞ս* ծնայ զսուսա /Թուոց., ԺԱ,12/:

Հաճախ հարցում արտահայտող առաջադաս ենթական, որ առանց այդ էլ տրամաբանորեն ընդգծված է, «գլաբարի վայելչությունների մեկի»[5] ավելորդ շրջման ոճական հնարանքի գործադրման շնորհիվ օժտվելով առանձնահատուկ արտահայտչականությամբ, այդ դիրքում վեր է ածվում նախադասությամբ հաղորդվող մտքի ամենակարևոր միավորի[6], ինչպես՝ *Դո՞ ես որ գալոցն ես* /Ղուկ.,Է,19/: *Ո՞վ* է որ մերձեցաւն յիս /ն.տ.,Ը,45/ և այլն:

Համառոտագրություններ

Ագաթ. - Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1914:
Բուզ. - Փաւստոսի Բիւզանդացւոյ Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1912:
Եզն. - Եզնկայ վարդապետի Կողբացւոյ «Եղծ աղանդոց», Թիֆլիս, 1914:
Եղ. - Եղիշէի Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին, Երևան, 1957:
Կոր. - Կորյուն, Վարք Մաշտոցի, Երևան, 1941:
ՂՓՊՀ – Ղազարայ Փարպեցւոյ Պատմութիւն Հայոց և Թուղթ առ Վահան Մամիկոնեան, Տփղիս, 1904:
ՄԽՊՀ – Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց, Տփղիս, 1913:
Ս. Գրքի (Աստուածաշունչ) մատեան Հնոց և Նորոց Կտակարանաց, Կ.Պոլիս, 1895) համառոտագրություններից՝ Առակ. - *Առակք Սողոմոնի,* Գ.որդ. - *Գործք Առաքելոց,* Դ.Թագ. - *Գիրք չորրորդ Թագաւորաց,* Դատ. - *Գիրք Դատաւորաց,* Ելից - *Գիրք Ելից,* Երգ. - *Երգ Երգոց,* Եսայի - *Մարգարէութիւն Եսայեայ,* Էկդ. - *Գիրք Էկդէսիաստիկեայ,* Թուոց - *Գիրք Թուոց,* Իմաստ. - *Գիրք Իմաստութեան,* Ծնն. - *Գիրք Ծննդոց,* Ղուկ. - *Սրբոյ Աւետարանիս Յիսուսի Քրիստոսի ըստ*

---

[5] *Ա. Բագրատունի, Հայերէն քերականութիւն ի պէտս զարգացելոց, Վենետիկ, 1852, էջ 444:*
[6] *Այդ մասին տե՛ս Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, Եր., 1965; Խ. Բաղիկյան, Ժամանակակից հայերենի պարզ նախադասության շարադասությունը, Եր., 1976, Ս. Հայրապետյան, Հայերենի շարադասության ոճական հնարավորությունների շուրջ, ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. 3, 2000 և այլն:*

Ղուկասու. Մատթ. - *Սրբոյ Աւետարանին Յիսուսի Քրիստոսի ըստ Մատթէոսի,* Մարկ. - *Սրբոյ Աւետարանին Յիսուսի Քրիստոսի ըստ Մարկոսի,* Յեսու. - *Գիրք Յեսուայ,* Յոբ - *Գիրք Յոբայ,* Յոհ.-*Սրբոյ Աւետարանին Յիսուսի Քրիստոսի ըստ Յոհաննու,* Սաղմ. - *Գիրք Սաղմոսաց.*

СЛОВОПОРЯДКОВЫЕ МОДЕЛИ ВОПРОСИТЕЛЬНЫХ ПРЕДЛОЖЕНИЙ КЛАССИЧЕСКОГО ГРАБАРА.

__ *Резюме* __ __ *С. Айрапетян* __

В статье рассматриваются все словопорядковые модели вопросительных предложений в языке самостоятельных и переводных источников первой половины V века. Выявляются особенности порядка слов и взаимосвязь между вопросительной интонацией и словопорядковой организацией в данном типе предложений классического грабара.

Фиксируется частотность и активность применения в языке каждой из этих моделей порядка слов. Рассматриваются также характерные для грабара "плеонастическая инверсия" и некоторые другие стилистико-выразительные особенности словопорядка в вопросительных предложениях древнеармянского литературного языка.